

միմք զի ընկալցիս ի մէնջ փոխանակ ընդ թա-
զին զոր ի ձեռն թղթոյդ եղեր ի գլուխ մեր :
Ընկալցիս ի Զաքարիայ նաեւ հանդերձս ինչ
քահանայականս ի պէտս աստուածեղէն պաշ-
տամանց , ձօնեալ քեզ ի մէնջ հանդերձ օր-
հնութեամբք Ս . Պետրոսի»¹⁴ :

Զաքարիա Կ . Պոլիս հասնելով կ'ընտրուի
սպարիարք : Քահանայապետական համառո-
տագիրն եւ նուէրները կը ղրկէ կաթողիկոսին
երկու եպիսկոպոսներու ձեռօք : Այս մասին
կը կարդանք Պօղոս Ե . ի առ Զաքարիա գրած
թուղթին մէջ (20 Հովտ . 1613) . «Իսկ ինչ որ
կը գրես թէ հոգ տարած ես ղրկելու առ յար-
դելի եղբայրն մեր Մելքիսեդեկ՝ Մեծաց
Հայոց կաթողիկոսը , մեր նամակն զոր մեր
ձեռքէն առած էիր , եւ ասոր համար ձեր ազ-
գէն երկու եպիսկոպոս ճամբայ դրած ես մեր
ընծաներովը , այս ամէնը կարի հաճելի եղաւ
մեզ . որովհետեւ մեծ փափաքով կամ լաւ եւս
մեծ սրտմաշուքով պատասխանի կը սպասենք
ուղղութեան մասին այն երկու մոլորութեանց ,
որոնց համար ըսիր մեզ որ դեռ կան ձեր եկե-
ղեցւոյ մէջ , այսինքն թէ քահանայագործու-
թեան մէջ սուրբ սկիզին մէջ գինւոյ հետ ջուր
չէք խառներ . եւ թէ Երեքսրբեան փառա-
տրութեան մէջ «Որ խաչեցար» բառերը կը
յաւելուք , որոնք կաթողիկէ սուրբ Եկեղեցիէն
Սինոդական վճռով դատապարտուած են .
որովհետեւ ինչպէս կ'ըցար իմանալ , այս եր-

¹⁴ Bzovius, Pont. Rom., 207.